**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 06-Ի №2346–Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԵՎ ԴՐԱ ՓԱՍՏԱՑԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, բնակարանային տնտեսության և համատիրությունների բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Զ/1736-2026 թվագրմամբ), շինությունների հատակագիծը ու բնութագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի օգոստոսի 06-ի №2346–Ա որոշմամբ պետական գրանցման ներկայացված բնակելի տանը և դրա փաստացի զբաղեցրած սահմանազատված հողամասին տրամադրել հասցե՝

**Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Գ. Նժդեհի փողոց, 2-րդ նրբանցք, 9 բնակելի տուն**

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
**/փոխարինող/**

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«26» օգոստոսի 2026 թվականի № 2455 Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ 167/2 (ՎԿԱՅԱԿԱՆ №06122021-08-0046), ՂՈՒԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ 167/5 (ՎԿԱՅԱԿԱՆ №10082012-08-0213), ՂՈՒԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ 167/7 (ՎԿԱՅԱԿԱՆ №20062013-08-0026) ԵՎ Յ. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 167/3 (ՎԿԱՅԱԿԱՆ №25082026-08-0046), ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Աշոտ Մինասյանի լիազորված անձ Արմեն Մինասյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №14639-2026 թվագրմամբ)՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

**1.**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոց 167/2 (վկայական №06122021-08-0046), Ղուկասյան փողոց 167/5 (վկայական №10082012-08-0213), Ղուկասյան փողոց 167/7 (վկայական №20062013-08-0026) և Յ. Վարդանյան փողոց 167/3 (վկայական №25082026-08-0046), հասցեներում գտնվող անշարժ գույքերի միավորումից առաջացող անշարժ գույքը հասցեավորել՝

**Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Ղ. Ղուկասյան փողոց, 167/2 պարիսպ**

**1.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Աշոտ Մինասյանի լիազորված անձ Արմեն Մինասյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2026-08-26 11:26:32 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից
eID

Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
/փոխարինող/

2026 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

<<26>> օգոստոսի 2026 թվականի N 2456-Ա

**ԿԱՐԵՆ ԴԵՐԵՆԻԿԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, 10-րդ կետերով, << Համայնքային ծառայության մասին >>օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ, 15-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի N 1002-Ն որոշմամբ հաստատված կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ծրագրերի և արտաքին կապերի բաժնի բաժնի պետի (ծածկագիր՝ 2.1-8) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի վերաբերյալ մրցութային հանձնաժողովի 2026 թվականի օգոստոսի 18-ի եզրակացությունը, Կարեն Դերենիկի Գալստյանի 2026 թվականի օգոստոսի 19-ի դիմումը, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման ենթակառուցվածքների նախարարության 2026 թվականի օգոստոսի 25-ի N ԱԴ/15.4/32305-2026 գրությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ծրագրերի և արտաքին կապերի բաժնի պետի ( ծածկագիր՝ 2.1-8 ) ժամանակավոր պաշտոնակատար Կարեն Դերենիկի Գալստյանին ազատել զբաղեցրած պաշտոնից և լուծել նրա հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագիրը՝ 2026 թվականի օգոստոսի 27-ից:

**2.** Կարեն Դերենիկի Գալստյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ծրագրերի և արտաքին կապերի բաժնի պետի (ծածկագիր՝ 2.1-8) պաշտոնում՝ 2026 թվականի օգոստոսի 27-ից:

**3.**Սահմանել փորձաշրջան երեք ամիս ժամկետով՝ մինչև 2026 թվականի նոյեմբերի 27-ը:

**4.** Աշխատավարձը սահմանել համաձայն պաշտոնային դրույքաչափի՝ ամսական 446.000 /չորս հարյուր քառասունվեց հազար / Հայաստանի Հանրապետության դրամ:

**5.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարեն Դերենիկի Գալստյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2026-08-26 12:08:39 GMT+4
Հավաստված է ԷՀԵՆԳ-ի կողմից

eID

**Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**
**փոխարինող**

**ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

<<26>> օգոստոսի 2026 թվականի N 2457 Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՌԱՖԻԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 163-րդ հոդվածով և հիմք ընդունելով Անդրանիկ Ռաֆիկի Կարապետյանի 2026 թվականի օգոստոսի 26-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի ( այսուհետ՝ բաժին ) պետի ժամանակավոր պաշտոնակատար Անդրանիկ Ռաֆիկի Կարապետյանին տրամադրել 2026-2027 թվականների աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 10 աշխատանքային օր՝ 2026 թվականի սեպտեմբերի 3-ից:
2. Ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 10 աշխատանքային օր՝ 2026 թվականի սեպտեմբերի 3-ից 16-ը ներառյալ:
3. Սույն որոշման 2-րդ կետում նշված ժամանակահատվածում Անդրանիկ Ռաֆիկի Կարապետյանի ծառայողական պարտականությունների կատարումը վերապահել բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Անդրանիկ Նորիկի Սարգսյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անդրանիկ Ռաֆիկի Կարապետյանին և Անդրանիկ Նորիկի Սարգսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2026-08-26 17:39:55 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից
eID

Գ.ՄԱՆՈՒԿՅԱՆ
/փոխարինող/

ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

<<26>> օգոստոսի 2026 թվականի N 2458 -Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԻԼԻԹ ՆՈՐԻԿԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ, 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի N 1002-Ն որոշմամբ հաստատված կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ծրագրերի և արտաքին կապերի բաժնի պետի (ծածկագիր՝ 2.1-8) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի վերաբերյալ մրցութային հանձնաժողովի 2026 թվականի օգոստոսի 18-ի եզրակացությունը, Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինողի 2026 թվականի օգոստոսի 26-ի «Կարեն Դերենիկի Գալստյանին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ծրագրերի և արտաքին կապերի բաժնի պետի պաշտոնում նշանակելու մասին» N 2456-Ա որոշումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ծրագրերի և արտաքին կապերի բաժնի պետի ( ծածկագիր 2.1-8 ) ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Նորիկի Մուրադյանին ազատել զբաղեցրած պաշտոնից՝ 2026 թվականի օգոստոսի 27-ից:

**2.** Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ կատարել վերջնահաշվարկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**3.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լիլիթ Նորիկի Մուրադյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**
**փոխարինող**

ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«26» օգոստոսի 2026 **թվականի** N 2459 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-88/26 ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ «ԹՎՈՎ 4 ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ» ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-88/26 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի միջոցով «Թվով 4 միկրոավտոբուսների վերանորոգման» ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմավորել.

1) պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝

ա. պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Հովհաննես Եգանյան –Գյումրի համայնքի փորձագետ

բ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Լյովա Սարոյան- Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի տրանսպորտի բաժնի առաջին կարգի մասնագետ,

2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Անի Ավդալյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2026-08-26 18:14:05 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**
**/ՓՈԽԱՐԻՆՈՂ/՝**

**2026թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«26» օգոստոսի 2026 թվականի N 2460Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-88/26 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ «ԹՎՈՎ 4 ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ» ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, 6-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ, 8-րդ կետի 3-րդ ենթակետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի«Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ»համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-88/26 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի միջոցով «Թվով 4 միկրոավտոբուսների վերանորոգման» ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմավորել գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով '

Հանձնաժողովի նախագահ՝
1) Հովսեփ Սիմոնյան – Գյումրի համայնքի ղեկավարի խորհրդական,
Հանձնաժողովի անդամներ՝
2) Դմիտրի Մանվելյան–Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,
3) Պարգև Հարությունյան- Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար,
4) Վարդան Զարիֆյան- Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի առաջատար մասնագետ,
5) Դավիթ Հարությունյան-Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար
Հանձնաժողովի քարտուղար՝
6) Անի Ավդալյան– Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2026-08-26 18:16:04 GMT+4
Ստորագրված է ԷՀԵՆԳ-ի կողմից

eID

**Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**
**/ՓՈԽԱՐԻՆՈՂ/՝**

**2026թ. ք. Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«26» օգոստոսի 2026 թվականի N 2461 Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-89/26 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ «ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ» ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-89/26 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի միջոցով «Միկրոավտոբուսների ապահովագրության» ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմավորել.

1) պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝

ա. պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Հովհաննես Եգանյան –Գյումրու համայնքի փորձագետ

բ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Լյովա Սարոյան- Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի տրանսպորտի բաժնի առաջին կարգի մասնագետ,

2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Անի Ավդալյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2026-08-26 18:20:00 GMT-4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից
eID

Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
/ՓՈԽԱՐԻՆՈՂ/

**2026թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«26» օգոստոսի 2026 թվականի N 2462 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-89/26 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ «ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ» ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, 6-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ, 8-րդ կետի 3-րդ ենթակետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի«Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ»համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-89/26 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի միջոցով «Միկրոավտոբուսների ապահովագրության» ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմավորել գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

1) Հովսեփ Սիմոնյան–Գյումրի համայնքի ղեկավարի խորհրդական,

Հանձնաժողովի անդամներ՝

2) Դմիտրի Մանվելյան–Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

3)Հրաչիկ Վարդանյան-Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ,

4) Սուսաննա Մելքոնյան–Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի տրանսպորտի բաժնի առաջատար մասնագետ,

5) Վարդան Զարիֆյան- Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի առաջատար մասնագետ

Հանձնաժողովի քարտուղար՝

6)Անի Ավդալյան– Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2026-08-26 18:21:42 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

eID

**Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**
**/ՓՈԽԱՐԻՆՈՂ/**

**2026թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«27» օգոստոսի 2026 թվականի № 2463 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՇՐՋԱՆՑՈՂ ՃԱՆԱՊԱՐՀ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ 20/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №2842061) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Դերենիկ Պոկացյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №14234-2026 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Արևելյան շրջանցող ճանապարհի 1-ին նրբանցք 20/3 հասցեում գտնվող բնակելի տունը (վկայական №2842061) վերահասցեավորել՝

**Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Հարավարևելյան շրջանցող ճանապարհ, 30/1 բնակելի տուն**

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Դերենիկ Պոկացյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**
**/փոխարինող/**

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«27» օգոստոսի 2026 թվականի №2464 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՏՆԻՇՅԱՆ ՓՈՂՈՑ 143 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №11102024-08-0067) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Կարապետ Մարտիրոսյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №14815-2026 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մատնիշյան փողոց 143 հասցեում գտնվող բնակելի տունը (վկայական №11102024-08-0067) վերահասցեավորել՝

**Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Ս. Մատնիշյան փողոց, 137/1 բնակելի տուն**

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Կարապետ Մարտիրոսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2026-08-27 10:29:48 GMT+4
Հավաստված է ԷՑՍՆ-Գ-ի կողմից

**Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**
**/փոխարինող/**

2026 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«27» օգոստոսի 2026 թվականի № 2465 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑ 40Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0538-0038) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Հասմիկ Խաչատրյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №14452-2026 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մեքենավարների փողոց 40ա հասցեում գտնվող բնակելի տունը (կադաստրային ծածկագիր 08-001-0538-0038) վերահասցեավորել՝

**Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Մեքենավարների փողոց, 40/1 բնակելի տուն**

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Հասմիկ Խաչատրյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2026-08-27 10:29:03 GMT+4
Հավաստիացված է ԷԹՆՏԳ-ի կողմից

eID

**Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**
**/փոխարինող/**

2026 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«27» օգոստոսի 2026 **թվականի** N 2466 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳՈԳՈՒՆՑԻ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 28.4 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 28.4 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (23.7 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Գոգունցի փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 28.4(քսանութ ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 28.4(քսանութ ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր արտաքին (23.7(քսաներեք ամբողջ յոթ տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին>> թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի՝ հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2026H4ANFV ծածկագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Գյումրի քաղաքի Գոգունցի փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 28.4(քսանութ ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 28.4(քսանութ ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր արտաքին (23.7(քսաներեք ամբողջ յոթ տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված ավտոտնակը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Խաչատուր Գևորգի Ղազարյանին :

3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին/:

4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Գ.ՄԱՆՈՒԿՅԱՆ**
/փոխարինող/

**2026թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«27» օգոստոսի 2026 թվականի № 2467-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՏՆԻՇՅԱՆ ՓՈՂՈՑ 184Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №1381433) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Մարիամ Գրիգորյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №14909-2026 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մատնիշյան փողոց 184ա հասցեում գտնվող բնակելի տունը (վկայական №1381433) վերահասցեավորել՝

**Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Ս. Մատնիշյան փողոց, 184/1 բնակելի տուն**

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Մարիամ Գրիգորյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2026-08-27 10:28:19 GMT+4
Հաստատված է ՀԿԵՆԳ-ի կողմից

eID

Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
/փոխարինող/

2026 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

**«27» օգոստոսի 2026 թվականի № 2468 Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԵՐՑԵՆԻ ՓՈՂՈՑ 5-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 34/4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ (ՎԿԱՅԱԿԱՆ №27042016-08-0017) ԲԱԺԱՄԱՆ ՍԽԵՄԱՅՈՎ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀԱՏՎԱԾՆԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Զ/1629-2026 թվագրմամբ), չափագրման արտոնագիր ունեցող «Մինասյան Մարինե Լուկաշենի» ԱՁ-ի կողմից տրամադրված հողամասի բաժանման սխեման և հատակագծերը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գերցենի փողոց 5-րդ նրբանցք 34/4 հասցեում գտնվող հողամասի (վկայական №27042016-08-0017) բաժաման սխեմայով առանձնացված հատվածներին տրամադրել հասցեներ.

1) **63.06** քառակուսի մետր մակերեսով հողամասը հասցեավորել՝
**Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Ի. Պավլովի փողոց, 22 հողամաս**

2) **100.94** քառակուսի մետր մակերեսով հողամասը հասցեավորել՝
**Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Ի. Պավլովի փողոց, 22/1 հողամաս**

3) **4.88** քառակուսի մետր մակերեսով հողամասը հասցեավորել՝
**Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Ի. Պավլովի փողոց, 22/2 հողամաս**

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

2026-08-27 16:27:04 GMT+4
Հաստատված է ԷՍՏՆ-ի կողմից

eID

**Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**
**/փոխարինող/**

2026 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«27» օգոստոսի 2026 թվականի № 2469 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԼԱԼԱՅԱՆ ՓՈՂՈՑ 9Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՍՈՒՆ ԳՈՄՑՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Սասուն Գոմցյանի լիազորված անձ Մոսկով Մածոյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված № 14967-2026 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Լալայան փողոց 9ա հասցեում գտնվող նվիրատվության պայմանագրով քաղաքացի Սասուն Գոմցյանին պատկանող բնակելի տանը տրամադրել հասցե՝

**Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Աղյուսի փողոց, 3-րդ նրբանցք, 26 բնակելի տուն**

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Սասուն Գոմցյանի լիազորված անձ Մոսկով Մածոյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2026-08-27 10:25:14 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

eID

**Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**
**/փոխարինող/**

2026 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«27» օգոստոսի 2026 թվականի № 2470Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 07-Ի №2357–Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Զ/1663-2026 թվագրմամբ), հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի օգոստոսի 07-ի №2357–Ա որոշմամբ օրինական ճանաչված և համայնքային սեփականություն համարված բնակելի շինությունը և դրա կառուցման ու սպասարկման համար սահմանազատված հողամասին տրամադրել հասցե՝

**Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Կ. Խաչատրյան փողոց, 13/1 բնակելի տուն**

1. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

2026-08-27 10:15:30 GMT+4
Հավաստված է ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԹՎԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

eID

**Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**
**/փոխարինող/**

2026 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«24» օգոստոսի 2026 **թվականի** N 2441 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՐՍԻ ԽՃՈՒՂՈՒ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 181.74 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 93.02 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (78.85 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Կարսի խճուղու հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 181.74 (մեկ հարյուր ութսունմեկ ամբողջ յոթանասունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 93.02 (իննսուներեք ամբողջ երկու հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին (78.85(յոթանասունութ ամբողջ ութսունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տուն:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին>> թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի՝ հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2026JQPZQ6 ծածկագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Գյումրի քաղաքի Կարսի խճուղու հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 181.74 (մեկ հարյուր ութսունմեկ ամբողջ յոթանասունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 93.02 (իննսուներեք ամբողջ երկու հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին (78.85(յոթանասունութ ամբողջ ութսունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի շինությունները և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Անահիտ Հակոբի Հակոբյանին:

3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին/:

4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Գ.ՄԱՆՈՒԿՅԱՆ**
/փոխարինող/

**2026թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## *Ո Ր Ո Շ Ու Մ*

*«27» օգոստոսի 2026 թվականի N 2472 -Ա*

**ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՐՈՒԺԱՆ ԼԵՎՈՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆ ՓՈՂՈՑ N1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 121.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 493.3 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Վարուժան Լևոնի Գևորգյանին պատկանող Գյումրի քաղաքի Բաշինջաղյան փողոց N1 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված են 123.4 (հարյուր քսաներեք ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով շինություններ, որից 2.4(երկու ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունը կառուցված 2024 թվականին (հիմք՝ ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2026EMNLRD ծածկագիր) և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 493.3 (չորս հարյուր իննսուներեք ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս:

Քաղաքացի Վարուժան Լևոնի Գևորգյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին, նշված հողամասի և շինությունների նկատմամբ սեփականության իրավունք ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում գործող քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանին Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հիմք ընդունելով քաղաքացի Վարուժան Լևոնի Գևորգյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականին N13303 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Քաղաքացի Վարուժան Լևոնի Գևորգյանին (ծնված 1958 թվականի հունվարի 20-ին) պատկանող Գյումրի քաղաքի Բաշինջաղյան փողոց N1 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված 123.4(հարյուր քսաներեք ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով շինություններից 121.0(հարյուր քսանմեկ) քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունները ճանաչել օրինական:
2. Ճանաչել քաղաքացի Վարուժան Լևոնի Գևորգյանի սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Բաշինջաղյան փողոց N1 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից, ավել օգտագործվող 300.0 (երեք հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինությունների նկատմամբ:
3. Գյումրի քաղաքի Բաշինջաղյան փողոց N1 հասցեին կից, սահմանված չափից ավել օգտագործվող 193.3 (հարյուր իննսուներեք ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Վարուժան Լևոնի Գևորգյանին ՝ տվյալ հողամասի կադաստրային գնով, որը կազմում է 6834 /վեց հազար ութ հարյուր երեսունչորս/ Հայաստանի Հանրապետության դրամ 1 /մեկ/ քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 1321012 /մեկ միլիոն երեք հարյուր քսանմեկ հազար տասներկու/ Հայաստանի Հանրապետության դրամ:
4. Սահմանված կարգով կնքել ավել օգտագործվող 193.3 (հարյուր իննսուներեք ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի առքուվաճառքի պայմանագիր /պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին/:
5. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
6. Սույն որշումը ուժի մեջ է մտնում քաղաքացի Վարուժան Լևոնի Գևորգյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2026-08-27 09:57:18 GMT+4
Հավաստված է ԷԹՆԵԳ-ի կողմից

eID

**Գ.ՄԱՆՈՒԿՅԱՆ**
**(փոխարինող)**

**2026 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## *ՈՐՈՇՈՒՄ*

*«27» օգոստոսի 2026 թվականի N 2473 -Ա*

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԼԵՌՆՈՒՀԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ՊԱՊՈՅԱՆԻՆ (1/12), ՌՈՒԶԱՆՆԱ ԿԱՐԼԵՆԻ ԳԱԼՈՅԱՆԻՆ (1/12), ԱՐՏՅՈՄ ԿԱՐԼԵՆԻ ԳԱԼՈՅԱՆԻՆ (1/12), ՍԵՐԳԵՅ ԱԼԲԵՐՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ (1/4), ԼԵՆԱ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ(1/4), ՀՐԱՉՅԱ ՌՈՒԲԵՆԻ ԳԱԼՈՅԱՆԻՆ (1/4) ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՂԱՅԱՆ ՓՈՂՈՑ N69 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 144.1 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 27.8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացիներ Լեռնուհի Համբարձումի Պապոյանին (1/12), Ռուզաննա Կարլենի Գալոյանին (1/12), Արտյոմ Կարլենի Գալոյանին (1/12), Սերգեյ Ալբերտի Հարությունյանին(1/4), Լենա Արտավազդի Ղուկասյանին(1/4), Հրաչյա Ռուբենի Գալոյանին(1/4) պատկանող Գյումրի քաղաքի Աղայան փողոց N69 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված են 144.1 ( հարյուր քառասունչորս ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ, (հիմք՝ ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2026VQMZPO ծածկագիր) և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 42.47(քառասուներկու ամբողջ քառասունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս:

Քաղաքացի Արտյոմ Գալոյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին, նշված հողամասի և շինությունների նկատմամբ սեփականության իրավունք ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում գործող քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանին Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հիմք ընդունելով քաղաքացի Արտյոմ Գալոյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականին N 13519 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Քաղաքացիներ Լեռնուհի Համբարձումի Պապոյանին(1/12) (ծնված 1942 թվականի հունիսի 20-ին), Ռուզաննա Կարլենի Գալոյանին(1/12) (ծնված 1967 թվականի հուլիսի 27-ին), Արտյոմ Կարլենի Գալոյանին (1/12) (ծնված 1969 թվականի հունիսի 11-ին), Սերգեյ Ալբերտի Հարությունյանին(1/4) (ծնված 1964 թվականի օգոստոսի 02-ին), Լենա Արտավազդի Ղուկասյանին(1/4) (ծնված 1938 թվականի դեկտեմբերի 07-ին), Հրաչյա Ռուբենի Գալոյանին(1/4) (ծնված 1969 թվականի սեպտեմբերի 08-ին) պատկանող Գյումրի քաղաքի Աղայան փողոց N69 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված 144.1 ( հարյուր քառասունչորս ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:
2.Ճանաչել քաղաքացիներ Ստյոպա Ցևորգի Գրիգորյանին, Հրաչյա Գևորգի Գրիգորյանին սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Աղայան փողոց N69 հասցեի բնակելի տան հողամասին կից, ավել օգտագործվող 42.47(քառասուներկու ամբողջ քառասունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և դրա վրա առկա շինության նկատմամբ:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Լեռնուհի Համբարձումի Պապոյանին, Ռուզաննա Կարլենի Գալոյանին, Արտյոմ Կարլենի Գալոյանին, Սերգեյ Ալբերտի Հարությունյանին, Լենա Արտավազդի Ղուկասյանին, Հրաչյա Ռուբենի Գալոյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

eID

**Գ.ՄԱՆՈՒԿՅԱՆ**
**(փոխարինող)**

**2026 թ. ք.Գյումրի**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# *ՈՐՈՇՈՒՄ*

*«27» օգոստոսի 2026 թվականի N 2474 -Ա*

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՀՄԱՅԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ (1/2) ԵՎ ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ (1/2) ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂՈՐՂԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ N170 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 18.38 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ 2 (ԵՐԿՈՒ) ԴՈՒՌՆ ՈՒ 3 (ԵՐԵՔ) ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ՓԱԿՎԱԾ 2 (ԵՐԿՈՒ) ԴՈՒՌՆ ՈՒ 1 (ՄԵԿ) ՊԱՏՈՒՀԱՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացիներ Հմայակ Հովհաննիսյանին (1/2) և Էդվարդ Հովհաննիսյանին (1/2) պատկանող Գյումրի քաղաքի Ղորղանյան փողոց N170 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված են 18.38 (տասնութ ամբողջ երեսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ (որից 11.46(տասնմեկ ամբողջ քառասունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով ինքնակամ շինությունը ֆիքսված տեխանձնագրում) ինքնակամ բացված է 2 (երկու) դուռ ու 3 (երեք) պատուհաններ, ինքնակամ փակված է 2 (երկու) դուռ ու 1 (մեկ) պատուհանն :

Քաղաքացի Էդվարդ Հովհաննիսյանը դիմել է նշված շինությունները օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հաշվի առնելով որ կառույցի պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով Էդվարդ Հովհաննիսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականին N3989 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Քաղաքացիներ Հմայակ Հովհաննիսյանին (1/2) և Էդվարդ Հովհաննիսյանին (1/2) պատկանող Գյումրի քաղաքի Ղորղանյան փողոց N170 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 18.38 (տասնութ ամբողջ երեսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններից, տեխանձնագրում ֆիքսված 11.46(տասնմեկ ամբողջ քառասունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով ինքնակամ շինությունը, ինքնակամ բացված 2 (երկու) դուռն ու 3 (երեք) պատուհանները, ինքնակամ փակված 2 (երկու) դուռն ու 1(մեկ) պատուհանը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 25648(քսանհինգ հազար վեց հարյուր քառասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ :
2. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Հմայակ Հովհաննիսյանին և Էդվարդ Հովհաննիսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2026-08-27 08:54:47 GMT+4

**Գ.ՄԱՆՈՒԿՅԱՆ**
**(փոխարինող)**

**2026 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«27» օգոստոսի 2026 թվականի N 2475 -Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ԼԻԼԻԹ ՌԱԶՄԻԿԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏՈԼՍՏՈՅԻ ՓՈՂՈՑ N55 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 203.28 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 117.66 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Լիլիթ Ռազմիկի Եղիազարյանին պատկանող Գյումրի քաղաքի Տոլստոյի փողոց N55 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված են 203.28(երկու հարյուր երեք ամբողջ քսանութ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ (հիմք՝ ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2026VHC3RG ծածկագիր) և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 117.66(հարյուր տասնյոթ ամբողջ վաթսունվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս:

Քաղաքացի Լիլիթ Եղիազարյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին, նշված հողամասի և շինությունների նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում գործող քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանին Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հիմք ընդունելով քաղաքացի Լիլիթ Եղիազարյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականին N13416 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Քաղաքացի Լիլիթ Ռազմիկի Եղիազարյանին (ծնված 1981 թվականի հունիսի 10-ին) պատկանող Գյումրի քաղաքի Տոլստոյի փողոց N55 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված 203.28(երկու հարյուր երեք ամբողջ քսանութ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:
2. Ճանաչել քաղաքացի Լիլիթ Ռազմիկի Եղիազարյանի սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Տոլստոյի փողոց N55 հասցեի բնակելի տան հողամասին կից, ավել օգտագործվող 117.66(հարյուր տասնյոթ ամբողջ վաթսունվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և դրա վրա առկա շինության նկատմամբ:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում քաղաքացի Լիլիթ Ռազմիկի Եղիազարյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2026-08-27 11:12:00 GMT+4
Հաստատված է ԷԼԵԿՆԳՓ գործիք

**Գ.ՄԱՆՈՒԿՅԱՆ**
**(փոխարինող)**

**2026 թ. ք.Գյումրի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«27» օգոստոսի 2026 **թվականի** N 2476-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 07-Ի N 785-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՎԿԱՅԱԿԱՆԸ ՉԵՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով, որ պայմանագրի ժամկետը լրացել է 2026 թվականի ապրիլի 30-ին և հիմք ընդունելով քաղաքացի Արթուր Պողոսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականի օգոստոսի 18-ին N 14767 թվագրմամբ)՝ **որոշում եմ.**

